Բարև՛,

Անունս Սայադ է: 20 տարեկան եմ: Այս նամակը քեզ գրում եմ մեծ հույսով, քանի որ գիտեմ, որ դու էլ ես խաղաղության կողմնակից: Քեզ չեմ ճանաչում: Սակայն գիտեմ, եթե դու իմ նամակը կարդալու ես, ուրեմն՝ դու էլ ես խաղաղություն ուզում: Ուզում եմ քեզ հետ անկեղծ լինել: Մեր հասարակության մեջ, երբ ասում են հայ, թշնամուն են հիշում: Վստահ եմ, որ ձեզ մոտ էլ է այդպես: Սակայն ես այդպես չեմ մտածում: Պատերազմական իրավիճակում ապրելը մեզ միայն վնաս է հասցրել: Ես քո հանդեպ ատելության զգացմունք չունեմ: Պատերազմական իրավիճակում գտնվելը ո՛չ իմ մեղքն է, ո՛չ՝ քո: Կարծում եմ, որ Լեռնային Ղարաբաղի և հարակից շրջանների օկուպացիան, մեր հազարավոր քաղաքացիների սպանությունը, այն, որ ավելի քան մեկ միլիոն բնակչություն չի կարողանում վերադառնալ իր հարազատ բնակավայրեր, քո մեղքը չէ: Ինձ շատ է տխրեցնում, որ այս հակամարտությունը դեռևս շարունակվում է, որովհետև այս վիճակը երկու կողմին էլ վնասում է: Վստահ եմ, որ դուք էլ եք վշտանում, երբ առաջնագծում սպանվում է ձեր զինվորը, այնպես ինչպես մենք ենք տխրում, երբ սպանվում է մեր զինվորը: Ախր, այնտեղ սպանվող զինվորը մի մոր զավակ է, մի երեխայի հայր: Ախր, անտրամաբանական է, որ մենք կարող ենք ապրել խաղաղության մեջ, սակայն ապրում ենք պատերազմական իրավիճակում: Ախր, այս հակամարտությունը երկու ժողովուրդներին, երկու պետություններին միայն ու միայն վնաս է հասցնում: Այս հակամարտությունը պատճառ է դառնում, որպեսզի երկու երկրները թե՛ տնտեսական, թե՛ սոցիալական առումով ետ մնան: Կարծում եմ՝ դու ինձ շատ լավ ես հասկանում: Մեր տարածաշրջանում խաղաղության հաստատումը երկու կողմի համար էլ զարգացման հիմնաքար կդառնա:

Խաղաղության հաստատման մաղթանքով:

Առո՛ղջ եղիր,

Սայադ